


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2016 թվականի մայիսին


(վերլուծություն)

2016 թվականի մայիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 14658 գործարք, որոնց քանակը 2016 թվականի ապրիլ ամսվա համեմատ նվազել է 2.0 %-ով, իսկ 2015 թվականի մայիսի համեմատ՝ 4.8 %-ով:

2016 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3596 օտարման գործարքի 71.9 %-ը կազմել է առուվաճառքը, 26.4 %-ը՝ նվիրատվությունը և 1.7 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքի քանակի 38.7 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 36.8 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2016 թվականի մայիսին, 2016 թվականի ապրիլի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքները նվազել են 8.1 %-ով, իսկ 2015 թվականի մայիսի համեմատ՝ 10.0 %-ով:

2016 թվականի մայիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 63.6 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2016 թվականի մայիսին, 2016 թվականի ապրիլի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 4.4 %-ով, իսկ 2015 թվականի մայիսի համեմատ՝ 3.9 %-ով:

2016 թվականի մայիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	մայիս 2015 թ.	մայիս 2016 թ.	ապրիլ 2016 թ.
Կենտրոն	428000	428000	428000
Արաբկիր	356600	357100	357000
Քանաքեռ-Զեյթուն	282700	283100	283100
Նոր Նորք	253200	254200	254150
Ավան	260700	261600	261500
Էրեբունի	252000	252300	252300
Շենգավիթ	257100	257600	257600
Դավթաշեն	275800	276650	276650
Աջափնյակ	250100	251000	250900
Մալաթիա-Սեբաստիա	243200	244050	244000
Նուբարաշեն	156750	157300	157250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի մայիսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2016 թվականի ապրիլի համեմատ մնացել են անփոփոխ :

2016 թվականի մայիսին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 309 բնակարան, որոնց քանակը 2016 թվականի ապրիլի համեմատ աճել է 7.7 %-ով, իսկ 2015 թվականի մայիսի համեմատ՝ նվազել 4.6 %-ով:

2016 թվականի մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		մայիս 2015 թ.	մայիս 2016 թ.	ապրիլ 2016 թ.
Արագածոտն	Աշտարակ	116000	116050	116050
	Ապարան	57750	58400	58350
	Թալին	66000	66750	66700
Արարատ	Արտաշատ	97900	98750	98700
	Մասիս	115800	115800	115800
	Վեդի	101200	101750	101700
	Արարատ	76500	77450	77400
Արմավիր	Վաղարշապատ	154100	154200	154200
	Արմավիր	121200	121250	121250
	Մեծամոր	87500	87600	87600
Գեղարքունիք	Սևան	99200	99400	99400
	Գավառ	60100	60550	60500
	Մարտունի	107700	107700	107700
	Վարդենիս	44850	45250	45200
	Ճամբարակ	28700	28750	28750
	Վանաձոր	88500	88600	88600
Լոռի	Ստեփանավան	74600	74750	74750
	Սպիտակ	99800	99850	99850
	Ալավերդի	55200	55750	55700
	Տաշիր	47300	47400	47400
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20300	20500	20500
	Արուսյան	155100	155150	155150
Կոտայք	Նոր Հաճն	128550	128550	128550
	Բյուրեղավան	108200	108250	108250
	Եղվարդ	109400	109850	109800
	Հրազդան	63800	63900	63900
	Ծաղկաձոր	292400	292400	292400
	Չարենցավան	85500	85500	85500
	Գյումրի	109200	109450	109450
Շիրակ	Արթիկ	66800	67250	67200
	Մարալիկ	40750	41050	41000
	Գորիս	122950	123600	123600
Սյունիք	Կապան	94100	94900	94900
	Սիսիան	91950	92200	92200
	Մեղրի	81850	82900	82900
	Ագարակ	47300	47700	47700
	Քաջարան	94600	94850	94850
	Դաստակերտ	8000	8000	8000
	Վայք	95000	95100	95100
Վայոց ձոր	Եղեգնաձոր	125600	126150	126150
	Ջերմուկ	112950	113200	113200
	Դիլիջան	114000	115500	115500
Տավուշ	Իջևան	118350	118550	118550
	Բերդ	60200	60450	60450
	Նոյեմբերյան	49900	50350	50350
	Այրում	31850	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2016 թվականի ապրիլի համեմատ մնացել են անփոփոխ :

2016 թվականի մայիսին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 328 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 102 գործարք, մարզերում՝ 226 գործարք: 2016 թվականի մայիսին, 2016 թվականի ապրիլի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 15.5 %-ով, ընդ որում, Երևանում՝ նվազել 8.9 %-ով, իսկ մարզերում՝ աճել 31.4 %-ով: 2016 թվականի մայիսին 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 2.2 %-ով, ընդ որում, Երևանում՝ նվազել 5.6 %-ով, իսկ մարզերում՝ աճել 6.1 %-ով:

2016 թվականի մայիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	մայիս 2015 թ.	մայիս 2016 թ.	ապրիլ 2016 թ.
Կենտրոն	476100	476100	476100
Արաբկիր	383000	383000	383000
Քանաքեռ-Զեյթուն	295000	295000	295000
Նորք-Մարաշ	319200	319200	319200
Ավան	270500	270500	270500
Էրեբունի	239750	239750	239750
Շենգավիթ	255000	255000	255000
Դավթաշեն	276000	276000	276000
Աջափնյակ	250050	250100	250050
Մալաթիա-Սեբաստիա	238000	238100	238000
Նուբարաշեն	150800	150800	150800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի մայիսին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի ապրիլի համեմատ մնացել են անփոփոխ:

2016 թվականի մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		մայիս 2015 թ.	մայիս 2016 թ.	ապրիլ 2016 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136250	136200
	Ապարան	60050	60050	60050
	Թալին	69250	69250	69250

Արարատ	Արտաշատ	100000	100000	100000
	Մասիս	115100	115100	115100
	Վեդի	102300	102300	102300
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153150	153100
	Արմավիր	107000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94800	94950	94950
	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96100	96100	96100
	Վարդենիս	41000	41150	41150
	Ճամբարակ	31100	31100	31100
Լոռի	Վանաձոր	100000	100900	100900
	Ստեփանավան	90000	91200	91200
	Սպիտակ	114000	114000	114000
	Ալավերդի	50200	50200	50200
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	157000	157350	157300
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82600	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	83000	83000	83000
Շիրակ	Գյումրի	118500	119250	119250
	Արթիկ	63100	63450	63450
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130000	130000
	Կապան	100000	100700	100650
	Սիսիան	96500	96500	96500
	Մեղրի	84500	84650	84600
	Ագարակ	46900	46900	46900
	Դաստակերտ	11610	11610	11610
Վայոց ձոր	Վայք	90050	90150	90150
	Եղեգնաձոր	116600	116750	116750
	Ջերմուկ	131300	131300	131300
Տավուշ	Դիլիջան	113000	115550	115550
	Իջևան	123200	123200	123200
	Բերդ	60100	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի ապրիլի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2016 թվականի մայիսին հանրապետությունում օտարվել է 1235 միավոր (587.23 հա) հող, որից Երևանում՝ 106 միավոր (9.71 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 716 միավոր (541.69 հա), որից Երևանում՝ 8 միավոր (2.03 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 333 միավոր (27.24 հա), որից Երևանում՝ 41 միավոր (1.98 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 139 միավոր (14.92 հա), որից Երևանում՝ 57 միավոր (5.69 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 10 միավոր (1.75 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 3 միավոր (0.89 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 34 միավոր (0.74 հա):

2016 թվականի մայիսին հանրապետությունում օտարված հողերից 988 միավորի (500.63 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 52 միավոր (5.68 հա), նվիրատվության գործարք՝ 198 միավորի (82.07 հա), որից Երևանում՝ 11 միավոր (0.86 հա) և փոխանակության գործարք՝ 49 միավորի (4.53 հա), որից Երևանում՝ 43 միավոր (3.17 հա):

Հանրապետությունում 2016 թվականի մայիսին, 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 33.8 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 36.5 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 25.1 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 33.3 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արարատի մարզում՝ 120.40 հա, որից 116.50 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 22.2 %-ը կամ 219 միավորը (137.10 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 13 միավոր (0.20 հա), իսկ 77.2 %-ը կամ 763 միավորը (363.41 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 39 միավոր (5.48 հա): 2016 թվականի մայիսին հանրապետությունում գրանցվել է կառուցապատման իրավունքի վաճառքի 6 գործարք (0.12 հա):

Ստորև ներկայացված է 2016 թվականի մայիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	0	0.00	4	0.02	9	0.18	6	1.76	0	0.00	19	1.75	14	1.97
Արագածոտն	5	4.60	0	0.00	0	0.00	3	0.14	55	36.84	1	0.01	14	1.24	1	0.02
Արարատ	12	76.07	0	0.00	4	0.08	5	0.04	57	40.43	0	0.00	42	3.77	2	0.01
Արմավիր	0	0.00	0	0.00	2	0.01	2	0.04	65	60.61	1	0.02	29	2.77	1	0.01
Գեղարքունիք	14	14.21	1	0.16	3	0.58	16	1.68	3	1.03	2	0.23	20	1.79	1	0.04
Լոռի	3	1.55	1	0.08	5	0.13	5	0.22	145	66.15	1	0.02	13	1.18	3	0.31
Կոտայք	22	13.74	1	0.02	18	0.78	7	0.26	93	78.92	0	0.00	57	5.23	7	0.27
Շիրակ	1	0.08	0	0.00	7	0.18	1	0.01	37	23.99	0	0.00	9	1.11	1	0.02
Սյունիք	6	10.22	0	0.00	4	0.20	3	0.05	21	17.40	0	0.00	1	0.07	1	0.03
Վայոց ձոր	2	9.46	0	0.00	2	0.01	2	0.10	19	9.34	0	0.00	4	0.57	1	0.01
Տավուշ	2	0.52	0	0.00	2	0.09	9	0.08	12	4.12	0	0.00	4	0.36	1	0.04
Ընդամենը	67	130.45	3	0.26	51	2.08	62	2.80	513	340.59	5	0.28	212	19.84	33	2.73

Ստորև ներկայացված է 2016 թվականի մայիսին պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	7	0.09	0	0.00	4	0.02	3	0.07	6	0.11	0	0.00	0	0.00	0	0.00	6	0.11
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	8	4.74	5	4.60	0	0.00	0	0.00	3	0.14
Արարատ	2	0.08	0	0.00	1	0.06	1	0.02	19	76.12	12	76.07	0	0.00	3	0.02	4	0.03
Արմավիր	1	0.01	0	0.00	1	0.01	0	0.00	3	0.045	0	0.00	0	0.00	1	0.005	2	0.04
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	34	16.63	14	14.21	1	0.16	3	0.58	16	1.68
Լոռի	1	0.002	0	0.00	0	0.00	1	0.002	13	1.98	3	1.55	1	0.08	5	0.13	4	0.22
Կոտայք	7	0.02	0	0.00	7	0.02	0	0.00	41	2.78	22	13.74	1	0.02	11	0.76	7	0.26
Շիրակ	5	0.14	0	0.00	4	0.13	1	0.01	3	0.05	0	0.00	0	0.00	3	0.05	0	0.00
Սյունիք	2	0.032	0	0.00	1	0.002	1	0.03	11	10.44	6	10.22	0	0.00	3	0.20	2	0.02
Վայոց ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	6	9.57	2	9.46	0	0.00	2	0.01	2	0.10
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	12	0.20	1	0.03	0	0.00	2	0.09	9	0.08
Ընդամենը	25	0.37	0	0.00	18	0.24	7	0.13	156	122.67	65	129.88	3	0.26	33	1.85	55	2.68

2016 թվականի մայիսին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 2 գործարք (0.57 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2016 թվականի մայիսին, 2015 թվականի մայիսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 32.4 %-ով: Ընդ որում, Երևանում աճել է 2 անգամ, իսկ մարզերում նվազել է 34.0 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 18.8 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 66.0 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 12.2 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 66.7 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2016 թվականի մայիսին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	3	4.11	115.4	1251.1	510.0	39	16.88	365.0	12000.0	3435.5
Ապարան						4	1.67	86.5	2727.3	630.0
Թային	1	0.41	244.9	244.9	244.9	7	4.72	93.6	5494.5	755.0
Ծաղկահովիտ	1	0.08	3410.5	3410.5	3410.5	5	13.58	79.5	1000.0	385.0
Արարատի մարզ										
Արտաշատ	5	1.70	283.8	36316.8	8427.1	31	17.31	335.1	10833.3	2715.0
Մալիս	1	0.06	1866.4	1866.4	1866.4	10	5.27	200.0	11904.8	3235.0
Վեդի	6	74.31	45.0	327.7	159.3	12	14.64	207.0	10795.1	1982.1
Արմավիրի մարզ										
Արմավիր						28	21.70	294.3	9090.0	1350.0
Բաղրամյան						16	24.88	90.6	2561.1	926.2
Վաղարշապատ						18	11.98	444.4	11764.7	1965.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	6	3.72	163.5	663.8	577.9			199.8	1875.0	500.0
Ճամբարակ						1	0.18	60.5	953.3	352.0
Մարտունի	4	4.35	64.6	381.1	144.0			51.1	2850.0	780.0
Սևան	4	6.13	180.0	1221.0	517.2			52.2	2134.8	355.0
Վարդենիս						2	0.85	41.2	2575.1	400.0
Լոռու մարզ										
Ալավերդի						3	2.45	170.4	6424.2	567.5
Գուգարք	2	0.37	252.8	1166.0	709.4	1	0.62	234.6	6065.9	810.0
Սպիտակ								250.0	5555.5	675.0
Ստեփանավան						7	3.61	90.6	1686.6	423.1
Տաշիր	1	1.18	168.1	168.1	168.1	134	59.47	45.3	1384.4	185.0
Կոտայքի մարզ										
Արուլյան	7	2.26	160.8	2470.0	946.7	19	2.95	279.3	11942.7	3910.0
Եղվարդ	8	8.55	81.4	615.2	370.9	64	70.91	174.4	11971.8	2506.0
Հրազդան	7	2.92	123.9	448.9	310.7	7	4.13	130.5	10256.4	985.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						12	8.64	252.0	1693.1	647.0
Ամասիա								40.9	261.0	136.5
Անի						21	13.00	110.6	546.9	455.1
Աշոցք								58.5	215.8	138.5
Արթիկ						4	2.35	79.4	1428.6	510.0

Սյունիքի մարզ										
Գորիս						4	7.69	92.6	1023.2	787.5
Կապան						9	4.38	120.0	841.6	442.0
Մեղրի	6	10.22	77.0	478.1	253.1	2	0.84	193.0	3000.0	810.0
Սիսիան						5	4.35	46.3	1977.4	590.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	2	9.46	29.7	29.7	29.7	8	2.72	125.0	10000.0	1750.0
Վայք						11	6.62	58.8	1430.7	595.0
Տավուշի մարզ										
Բերդ						2	0.33	213.3	3783.8	690.0
Իջևան						10	3.79	267.5	9454.5	1514.0
Նոյեմբերյան	1	0.03	5806.9	5806.9	5806.9			46.7	7368.4	985.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2016 թվականի մայիսին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						10	7986.0	130.7	22200.0	2590.0
Ապարան						3	1593.0	124.1	609.6	390.0
Թալին								63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						1	2790.0	60.0	214.3	93.5
Արարատի մարզ										
Արտաշատ						7	5842.4	173.9	7140.3	904.8
Մասիս	3	166.1	3175.8	3292.9	3219.6	28	21144.1	187.5	25000.0	1206.5
Վեդի						6	9706.0	126.1	5000.0	668.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	45.4	3527.9	3527.9	3527.9	12	11873.0	131.6	9090.9	1215.5
Բաղրամյան								100.0	833.3	240.0
Վաղարշապատ						13	11459.0	197.4	26528.4	1528.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	2	4636.0	850.5	850.5	850.5	4	4206.8	186.6	1084.3	683.6
Ճամբարակ						2	1377.0	71.3	2286.2	146.8
Մարտունի	1	1200.0	219.8	219.8	219.8	8	8258.8	119.3	5000.0	280.0
Սևան						3	1353.0	240.0	3110.4	340.0
Վարդենիս						3	2690.0	72.5	987.2	151.5
Լոռու մարզ										
Ալավերդի	1	48.0	442.7	442.7	442.7	7	6974.6	114.3	1388.9	217.0
Գուգարք	3	91.5	2201.4	2305.5	2236.7			77.9	14083.3	1260.3
Սպիտակ						4	2740.0	104.9	1348.3	200.0
Ստեփանավան	1	1177.6	173.2	173.2	173.2	1	1150.0	88.2	1666.7	175.5
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	7	4884.4	352.9	4975.7	2133.0	29	22249.5	264.5	35353.5	1946.5
Եղվարդ	4	2735.9	445.6	4425.0	3071.4	23	17480.5	173.6	27000.0	2854.5
Հրազդան						4	11447.0	117.7	34848.5	1318.3

Շիրակի մարզ										
Ախուրյան	1	111.2	8495.9	8495.9	8495.9			113.6	18750.0	334.7
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի	1	400.0	464.9	464.9	464.9	6	9982.4	67.9	180.6	210.0
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ	1	27.0	2875.2	2875.2	2875.2	2	1000.0	111.8	5000.0	217.5
Սյունիքի մարզ										
Գորիս								112.2	1700.0	367.4
Կապան								67.9	2638.9	355.0
Մեղրի						1	650.0	68.5	632.9	270.0
Սիսիան	3	2000.0	554.4	580.8	572.0			123.5	875.0	250.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						4	5740.0	96.7	7659.6	504.5
Վայք	2	66.3	1050.0	1068.7	1059.4			120.7	1448.3	250.0
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	125.3
Իջևան	2	900.0	1366.0	1366.0	1366.0	4	3590.0	74.1	14423.1	512.4
Նոյեմբերյան								125.0	1948.1	252.0

2016 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 630 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.3 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 79.4 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2016 թվականի մայիսին, 2016 թվականի ապրիլի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 7.4 %-ով, իսկ 2015 թվականի մայիսի համեմատ՝ աճել 5.2 %-ով:

2016 թվականի մայիսին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 24 բնակարանի, 59 անհատական բնակելի տան, 298 հասարակական և 74 արտադրական նշանակության օբյեկտի, 158 հողի և 17 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, սերվիտուտի և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2016 թվականի մայիսին Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 9 վարձակալության գործարքի քանակը 2016 թվականի ապրիլի համեմատ նվազել է 18.2 %-ով, իսկ 2015 թվականի մայիսի համեմատ՝ աճել 50 %-ով:

2016 թվականի մայիսին հանրապետությունում վարձակալված 316.57 հա հողից 1.81 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 314.76 հա հողերից 307.40 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 2.77 հա արդյունաբերական օբյեկտների, 0.18 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հող վարձակալվել է Գեղարքունիքի մարզում՝ 182.73 հա, որից 182.33 հա գյուղատնտեսական նշանակության:

2016 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1968 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 13.4 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2016 թվականի ապրիլի համեմատ, աճել է 16.9 %-ով, իսկ 2015 թվականի մայիսի համեմատ՝ 45.6 %-ով:

Գրավադրման գործարքն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (48.6 %), անհատական բնակելի տների (21.2 %), հասարակական նշանակության օբյեկտների (10.6%) և հողերի (12.8 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1044 գրավադրման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2016 թվականի ապրիլի համեմատ աճել է 11.4 %-ով, իսկ 2015 թվականի մայիսի համեմատ՝ 33.8 %-ով:

2016 թվականի մայիսին հանրապետությունում գրավադրվել է 2928.17 հա հող, որից 5.63 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողի 6.9 %-ը կամ 501.16 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հող գրավադրվել է Վայոց ձորի մարզում՝ 1618.05 հա, որից 189.56 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2016 թվականի մայիսին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 160 գործարք: 2016 թվականի մայիսին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2016 թվականի ապրիլի համեմատ, աճել է 14.3 %-ով, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 53.8 %-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 97 գործարք, որը 2016 թվականի ապրիլի համեմատ մնացել է անփոփոխ, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել է 22.8 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2016 թվականի ապրիլի համեմատ, աճել է 46.5 %-ով, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 2.5 անգամ :

2016 թվականի մայիսին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 1537 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2016 թվականի ապրիլի համեմատ, նվազել է 10.8 %-ով, իսկ 2015 թվականի մայիսի համեմատ՝ 16.6 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 10.5 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (24.3 %):

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե